ԱՐԱՄԵԱՑԻՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԸ ԴԵՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՅՔԱՐԸ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԴԵՄ (մ. թ. ա. XII—XI դդ.)

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մ. թ. ա. XII դարի վերջում, Թիգլաթպալասար I թագավորի (մ. թ. ա 1115—1077 թթ.) գահակալության ժամանակ, Ասորեստանը կրկին հզորացավ։ Ասորեստանի գլխավոր հակառակորդներն էին Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները և արամեական ցեղերի նոր զանգվածները։

Թիգլաթպալասար I-ը իր իշխանության հենց սկզբից մեծ արշավանք է կազմակերպում դեպի հյուսիս։ Առաջին հերթին նա ընդհարվում է Կաղմուխիի սահմաններում կուտակված մուշկերի ռազմամիավորումների հետ[1]*։*

Մուշկերի դեմ տարած հաղթանակից հետո Թիգլաթպալասարը ներխուժում է Կաղմուխի երկիրը. կաղմուխցիները անցնում են Տիգրիս գետը և ամրանում Շերեշե ամրոցում։ Այստեղ նրանց օգնության են հասնում բաբխիները։ Թիգլաթպալասարը ներխուժում է Շերեշե և պարտության է մատնում կաղմուխցիների և բաբխիների միացյալ զինվորական ուժերին։ Նա գերեվարում է Կաղմուխիի թագավոր Քալի-Թեշշուբի որդուն՝ Քիլի-Թեշշուբին, «որին անվանում էին (նաև) Իրրուպի»։ Շերեշեի նվաճումից հետո, Թիգլաթպալասարը պաշարում է այդ տարածքում գտնվող Ուրախինաշ (կամ Ուրրատինաշ) քաղաքը։ Ուրախինաշի իշխան Խաթթուխիի որդին՝ Շադի-Թեշշուբը իր քաղաքը ավերումից փրկելու նպատակով ներկայանում է Թիգլաթպալասարին և ընդունում ասսուրական լուծը։ Այստեղից Ասորեստանի թագավորը շարժվում է դեպի Հայկական լեռնաշխարհի քաղաքները։

Այս կապակցությամբ հետաքրքիր են Թիգլաթպալասարի տարեգրության հետևյալ տողերը. «Ուժեղ և անհնազանդ շուբարիների երկիրը (ինձ) ենթարկեցի. իմ տերության ծանր լուծը դրի իրենց հարկն ու տուրքը դադարեցրած Ալզի և Պուրուլումզի երկրների վրա, (որպեսզի) անպայման տարեցտարի տուրքն ու հարկն ուղարկեն իմ Աշշուր քաղաքը, իմ առջև. եռսկ իմ քաջության շնորհիվ, քանզի Աշշուրը՝ իմ տերը չհնազանդվողին ճնշելու հզոր զենք էր տվել իմ ձեռքը և հրամայել իր երկրի սահմանը ընդարձակել.—4000 կասկեր և ուրումեացիներ (ուրուացիներ)՝ Խաթթի երկրի անհնազանդ զինվորներ, որոնք իրենց ուժով գրավել էին իմ տիրոջ՝ Աշշուրին ենթակա Շուբարթու երկրի քաղաքները՝ դեպի Շուբարթու իմ արշավելու մասին լսեցին և իմ քաջության փայլը ահարեկեց նրանց. նրանք ճակատամարտից վախեցան և գրկեցին իմ ոտքերը։ Նրանց հարստությունը, 120 մարտակառք, նրանց լծասարքերը ես վերցրի և նրանց իմ երկրի մարդիկ համարեցի»[2]*։*

Չնայած ասսուրական արձանագրություններում Ալզին և Պուրուլումզին

---

[1] E. A. Budge. L. W. King. Annals of the Kings of Assyria. I, London, 1902. p. 35, (*այսուհետև՝* AKA); A. K. Grayson. The Assyrian Royal Inscriptions. II. Wiesbaden, 1976, § 12 (*այսուհետև՝* ARI); *Հ. Մ. Ավետիսյան. Ասսուրական արձանագրությունները Հայկական լեռնաշխարհի ցեղերի, ժողովուրդների ու պետական միավորումների մասին.—Հայ ժողովրդի պատմության Քրեստոմատիա, I, Երևան, 1981, էջ 16։*

[2] AKA I, p. 47; ARI II, § 12; *Հ. Մ. Ավետիսյան. Ասսուրական արձանագրությունները..., էջ 16։*

համարվում են շուբարական երկրներ[3], բայց վերոհիշյալ արձանագրության համաձայն, Ասորեստանի թագավորը Ալզի և Պուրուլումզի անցնելուց հետո նոր հայտնվում է «Շուբարթու» երկրում, որտեղ, ըստ Թիգլաթպալասարի, արդեն բնակություն էին հաստատել կասկերը և ուրումեացիները (ուրուացիներ-հայասացիներ)։ Ելնելով Թիգլաթպալասար I-ի տարեգրության տվյալներից ենթադրվում է, որ այս ժամանակաշրջանում Շուբարթուում իշխում էր Արի-Թեշշուբ անունով թագավորը[4]։ Սա նշանակում է, որ Թիգլաթպալասարի թագավորության տարիներին, Շուբարթու ասելով, ասորեստանցիները նկատի ունեին կոնկրետ երկիր, իսկ այդ երկիրը, հաշվի առնելով Թիգլաթպալասարի արշավուղին, համապատասխանում է Սասունի և Մուշի շրջաններում հիշատակվող Շուբրե պետական կազմավորմանը։

Հաջորդ տարի Ասորեստանի թագավորը հերթական արշավանք է ձեռնարկում Կադմուխի երկիր[5]։ Այստեղ իր իշխանությունը վերականգնելուց հետո նա շարժվում է դեպի Իսուա (Իսուվա-Ծոփք), Սուխմու (Ծուխմու) և Հայկական լեռնաշխարհի մյուս շրջանները[6]։ Ասորեստանի թագավորին դիմադրություն են ցուցաբերում Նաիրի երկրների 60 թագավորները (իշխանները)[7]։ Ասորեստանյան և նաիրյան բանակների միջև գլխավոր ճակատամարտը հավանաբար տեղի է ունենում Արածանի գետի վերին հոսանքի ավազանում՝ Մանազկերտի մոտ գտնվող Յոնջալու բնակավայրում, որտեղ պեղումների ժամանակ հայտնաբերվել է Թիգլաթպալասար I-ի արձանագրությունը[8]։ Այս ճակատում Ասորեստանի գլխավոր հակառակորդն էր Եփրատ և Ճորոխ գետերի վերին հոսանքների ավազանում ձևավորված Դայաենի թագավորությունը[9]։ Այստեղ այն ժամանակ իշխում էր Սենի թագավորը։

Ռազմական գործողությունների ժամանակ Թիգլաթպալասարը պարտության է մատնում նաիրյան թագավորներին և ստիպում է նրանց ենթարկվել Ասորեստանին, իսկ անհնազանդ Սենիին գերեվարում և տանում է իր Աշշուր մայրաքաղաքը, բայց հետո հանգամանքների բերումով ներում է շնորհում նրան[10]։

Հետաքրքիր է, որ Թիգլաթպալասարի այս արշավանքների ժամանակ Հյուսիսային Միջագետքում հաստատված արամեացիները չեն հիշատակվում։ Հընարավոր է, որ այս անգամ նրանք չեն մասնակցել ռազմական գործողություններին։ Ասորեստանի բնակավայրերի վրա հաճախակի հարձակումներ էին գործում Եփրատի հովտում բնակված արամեացիները։ Ուստի, Ասորեստանի տիրապետությունը Հայկական լեռնաշխարհում ապահովելուց հետո, Թիգլաթպալասարը իր հիմնական ռազմական ուժերը կենտրոնացնում է պետության հյուսիս-արևմտյան ծայրամասերում։ Սկսվում է Ասորեստանի և արամեացիների անընդմեջ ռազմական բախումների շրջանը, որը հարատևում է շուրջ 14 տարի, եթե հաշվի առնենք Թիգլաթպալասար I-ի այն վկայությունը, թե իբրև արամեացիներին ճնշելու նպատակով նա տարեկան երկու անգամ՝ ընդամենը 28 անգամ, անցել է Եփրատ գետը և պարտության է մատնել նրանց տարբեր երկրամասերում՝ սկսած Ամուրրու երկրի Թադմար (=Թադմոր-Պալմիրա), բարե-

---

3 И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту.—Вестник древней истории, 1951, №2—4, с. 267, № 3 (այսուհետև՝ АВИИУ).

4 J. D. Hawkins. Assyrians and Hittites.—Iraq, vol 36, 1974, № 1—2, p. 78.

5 AKA, I, p. 51 ARI, II, § 19.

6 AKA, I, p. 57; ARI, II, § 24—32.

7 AKA, I, p. 63—68; ARI, II, § 30.

8 АВИИУ. № 17, прим. I

9 Դայաենի (ուրարտական աղբյուրների Դիաուխի) թագավորությունը գտնվել է Միջերկրական ծովից և Միջագետքից դեպի Սև ծով տանող գլխավոր առևտրական ճանապարհի վրա, այն համարվում է Հայկական լեռնաշխարհի հարուստ թագավորություններից մեկը։ И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 137

10 AKA, I, p. 68—71; АВИИУ, № 10; ARI, II, § 30—31.

լական Ռապիկու[11] և Սուխու երկրի Անատ[12] քաղաքներից մինչև Կարքեմիշ քաղաքը[13]։

Ասորեստանի Թիգլաթպալասար թագավորը իր տարեգրություններում ռազմական իրադարձությունները նկարագրելիս սովորաբար խոսում է միայն իր հաղթանակների մասին, այն էլ խիստ չափազանցված։ Արամեացիների դեմ կատարած արշավանքի մասին նա գրում է.

«...Ախլամեացիների-արամեացիների, իմ տիրոջ՝ Աշշուր աստծու թշնամիների դեմ ես գնացի. Սուխու երկրից մինչև Խաթթե երկրի Կարգամիշ քաղաքը մեկ օրում ես կողոպտեցի, նրանց ջարդը կազմակերպեցի· նրանց ավարը, ունեցվածքը և գույքը անհաշիվ ես տարա։ Նրանց զորքից մնացածը, որոնք իմ տիրոջ՝ Աշշուրի զայրույթից փախան և Փուրատտու (Եփրատ) գետը անցան, նրանց հետևից նավակներով և տիկերով Փուրատտու գետը անցա։ Բեշրի լեռան ստորոտում (գտնվող) նրանց քաղաքները ես նվաճեցի, այրեցի, քանդեցի, ոչնչացրի. նրանց ավարը, ունեցվածքը (և) գույքը՝ իմ քաղաքը բերի...»[14]։

Այս արձանագրությունից հետևում է, որ ասորեստանցիների և արամեացիների միջև ճակատամարտը տեղի է ունեցել սկզբում Եփրատի արևելքում՝ Բալիխ և Խաբուր գետերի միջև՝ Ասորեստանին ենթակա տարածքում, իսկ սա հաստատում է, որ արամեացիներն են նախահարձակ եղել և ներխուժել Ասորեստանի սահմանները և ոչ թե հակառակը, ինչպես փորձում է մեզ համոզել Թիգլաթպալասար I-ը։ Ճակատամարտից հետո արամեացիները իսկապես նահանջում են. նրանք անցնում են Եփրատ գետը և կենտրոնանում են շուրջ 70 կմ Դեր-Զորից հյուսիս-արևմուտք գտնվող Բեշրի (Զեբել-էլ-Բիշրի) լեռան մոտ։ Ասորեստանի թագավորը հետապնդելով նրանց, կրկին բախվում է նրանց հետ։ Նրա վկայությամբ նա հաղթում է արամեացիներին և գրավում է Բեշրի լեռան մոտ գտնվող նրանց վեց բնակավայրերը։ Ահա և սա է Թիգլաթպալասար I-ի արամեացիների դեմ 14 տարվա ընթացքում վարած ռազմական գործողությունների արդյունքը։ Հետևաբար կարելի է հաստատել, որ Ասորեստանի թագավորը արշավանքների ժամանակ էական հաջողության չի հասնում. նա հիմնականում թշնամուց ավատագրում է իր երկիրը։ Ուստի պատահական չէ, որ նրա մահից հետո, նրա որդին՝ Աշարեդ-ապիլ-էկուրը (մ.թ.ա. 1076—1075 թթ.) իր իշխանության երկու տարիների ընթացքում անզոր է լինում նույնիսկ պաշտպանել իր սահմանները։ Ասորեստանի համար այս բավականաչափ բարդ քաղաքական իրադրության պայմաններում իշխանության գլուխ է բարձրանում Թիգլաթպալասար I-ի մյուս որդին՝ Աշշուր-բել-կալա թագավորը (մ.թ.ա. 1074—1057 թթ.)։ Նա առաջին հերթին իր զորքերն առաջնորդում է դեպի Արևելյան Խաբուր և Մեծ Զաբ գետերի միջին և վերին հոսանքների շրջանները։ Այստեղ նա բախվում է Ուրուատրի ցեղային միության և Խաբխի երկրի զորամիավորումների հետ և, իր իսկ վկայությամբ, հաղթանակով վերադառնում է Ասորեստան[15]։

Ասորեստանի թագավորը վերջապես փորձում է կասեցնել արամեացիների սպառնալից առաջխաղացումը և այդ նպատակով մեծ զորքով շարժվում է դե-

---

11 Ռապիկու քաղաքը գտնվել է Իրաքում՝ ներկ. Ռամադի (— Ալ-Անբար) շրջանում, Եփրատ գետի արևմտյան ափին։

12 Անատը (ներկ. Անա քաղաքը Իրաքում) կղզի է Եփրատի մեջ՝ Խադիտա քաղաքից դեպի հյուսիս։ Տարածքը 0,5 քառակուսի կիլոմետր է (երկարությունը 1 կմ, լայնությունը՝ 0,5 կմ)։ Այստեղ կատարվել են սիստեմատիկ պեղումներ, որոնց ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ հնագիտական նյութեր, այդ թվում՝ Սուխու թագավորի՝ Շամաշ-ռեշ-ուցուրի որդու՝ Նինուրտա-կուդուրու-ուցուրի արձանագրությունը (աքքադերեն լեզվով) և այլ տեքստեր, որոնք պահվում են Իրաքյան թանգարանում։ Անատ կղզին Խադիտա ջրամբարի կառուցման հետևանքով, այսօր հավանաբար ընկղմված է եփրատյան ջրերում։

13 ARI, II, §§ 34, 83, 97, 143.

14 AKA, I, p. 73; ARI, II, § 34.

15 ARI, II, § 216.

պի հյուսիս. Այս ուղղությամբ կատարած արշավանքների կապակցությամբ գրված նրա տարեգրությունները հատուկ ոճով են շարադրված· այստեղ բազմիցս կրկնվում է ... harranu sa[illegible] a-ri-me · · · ma-ta-ha-aṣ արտահայտությունը: Harranu (KASKAL) նշանակում է «ճանապարհ», ռազմական արշավանք, առևտրական ուղևորություն, քարավան[16], կոնտինգենտ[17]: Կոնտինգենտ ասելով Ա. Գրեյսոնը ավելի շուտ հասկանում է առևտրական կոնտինգենտ, քան ռազմականը: Սակայն առևտրական կազմակերպությունները հիմնականում գործ ունեին առ ու ծախի հետ. բնականաբար, նրանք պետք է շահագրգռված լինեին միայն պաշտպանել իրենց ունեցվածքը, բայց ինչպես հիշատակում է Աշշուր-բել-կալան[18] և ինչպես վերը նշել ենք Թիգլաթպալասար I-ի արամեացիների դեմ կատարած արշավանքի կապակցությամբ, արամեացիները Աշշուր աստծու թշնամիներն էին և նրանք էին հարձակվում Ասորեստանի վրա, իսկ հարձակվել կարող էին միայն հատուկ զինված ջոկատները, հետևաբար մենք կարծում ենք, որ Աշշուր-բել-կալայի տարեգրության խարրանու բառը նշանակում է «ռազմական կոնտինգենտ» կամ «կայազոր», մի փաստ, որը խոսում է նաև քոչվոր արամեացիների ռազմական բարձր կազմակերպվածության մասին:

Բոլոր դեպքերում, անկախ այն բանից, թե խարրանու ասելով ինչ էին հասկանում ասորեստանցիները, Աշշուր-բել-կալայի արձանագրությունները հատուկ վկայում են Հյուսիսային Միջագետքում և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում արամեացիների ռազմական ջոկատների գոյության մասին: Այս կապակցությամբ հետաքրքիր են Աշշուր-բել-կալայի տարեգրության հաճեատաբար լավ պահպանված հետևյալ հատվածները.

... «...Նա (Աշշուր-բել-կալան) կոտորեց արամեացիների կայազորը [—X—] մարզի Շածիրու քաղաքում...»[19]: «...Նա կոտորեց արամեացիների կայազորը Կաշիարի լեռան ստորոտում գտնվող Պաուծա քաղաքում...»[20]: «...Նա կոտորեց արամեացիների կայազորը Նաբուլա քաղաքի դարպասի մոտ...»[21], «...Նա կոտորեց արամեացիների կայազորը Տիգրիս գետի մոտ գտնվող [...] Տիբուա քաղաքում...»[22]: «...Նա կոտորեց արամեացիների կայազորը Շինամու[23] մարզի մոտ գտնվող Լիշուրծալա-Աշուրի քաղաքներում...»[24], «...այն տարում, էլուլու (օգոստոս-սեպտեմբեր) ամսում նա կոտորեց արամեացիների

---

16 Օրինակ harranat sa hurasi sa ahlame «ախլամյացիների ոսկու քարավանը»—ARI. II, p. 53, note 226.

17 W. von Soden. Akkadisches Handwortbuch. Wiesbaden, S. 326; ARI, II, p. 53, note 226.

18 ARI, II, § 255.

19 AKA, I, p. 132.

20 AKA, I, p. 134, ARI, II, § 239.

21 Նույն տեղում. Նաբուլա քաղաքը նույնացվում է ներկայիս Նիբլիի (—Նեբիլի) հետ—25 կմ Նուսայբինից հյուսիս-արևելք։ Տե՛ս—E. Forrer. Die Provinzeinteilung des assyrishen Reiches. Leipzig, 1921, S. 21 (PAR).

22 AKA, I, p. 134; ARI, II, § 240.

23 Ըստ Բողազքյոյի արձանագրությունների (KUB 26, 43։40, 50։35; A. Goetze. Kizzuwatna and the Problem of Hittite Geography. London, 1940, p. 70). Շինամու քաղաքը գտնվել է Կիցցուվատնայի մայրաքաղաք՝ Կիցցուվատնա (=Կումմանի-Կոմանա կատունյան) քաղաքի մոտ (A. Ungnad. Subartu. Beiträge zur Kulturgeschichte und Volkerkunde. Berlin—Leipzig, 1936, S. 135, note 2); A. Goetze. Kizzuwatna..., p. 10. Սակայն Աշշուր-բել-կալայի արձանագրությունում հիշատակված Շինամու քաղաքը գտնվել է Հյուսիսային Միջագետքում (տե՛ս H. Klengel. Zum Brier eines Konigs von Hanigalbat (IBoT I. 34).—Orientalia, 32, 1963, № 3, S. 284).

24 AKA, I, p. 135; ARI, II, § 241. Այնուհետև խոսվում է Խանիգալբատ երկրի Շու[—]րու և Կաշիարի լեռան մոտ գտնվող Խուլզու և Խարխիացիների կողմից գրաված Էրեշու քաղաքների նվաճման մասին։

կայազորը՝ Շուբրև երկրի Մուրար [բիր] քաղաքում...»[25]; «...նա կոտորեց արամեացիների կայազորը Յարի երկրի Մագրիսու քաղաքում»[26]; Այդպիսի արամեական կայազորներ հիշատակվում են նաև Խառանի (Խարրանի) շրջանում[27], Ադեմ և Փոքր Զաբ գետերի վերին հոսանքների շրջանում գտնվող Խանու լեռան ստորոտում (Լուլլումու երկրում) և այլ երկրամասերում[28]։

Շուբրի երկրում արամեացիները հիշատակվում են նաև հետագայում՝ Ասորեստանի Սարգոն II թագավորի իշխանության տարիներին (մ.թ.ա. 721—705)[29]։ Ս. թ. ա. X դարում Հյուսիսային Միջագետքում ձևավորվում են արամեական իշխանություններ[30], իսկ մ. թ. ա. VIII դարում բազմաթիվ արամեական ցեղախմբեր հիշատակվում են Տիգրիս գետից արևելք՝ Փոքր Զաբ գետի ավազանում[31]։

Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան ծայրամասում արամեացիների տարածման մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Ասորեստանի Աշշուր-նածիր-ապալ II թագավորը (մ.թ.ա. 883—859 թթ.)։ Այս կապակցությամբ հետաքրքիր է նրա արձանագրության հետևյալ հատվածը. «...Սինաբու և Թիդու ամրոցները, որոնք Շուլմանուաշարեդուն[32] (=Սալմանասար I) Ասորեստանի թագավորը՝ իշխանը ինձնից առաջ, հիմնել էր Նաիրի երկրում, որոնք արամեացիները ուժով խլեցին, իմ սեփականությունը դարձրին։ Ասորեստանցիներին, որոնք Նաիրի երկրում Ասորեստանի քերդերը պահում էին (և) որոնց արամեացիները ճնշել էին, նրանց լքած բնակավայրերում և տներում (կրկին) հաստատեցի, խաղաղ բնակարաններում բնակեցրի...»[33]։

Սինաբու և Թիդու բերդերը, ինչպես հետևում է Աշշուր-նածիր-ապալ II-ի արձանագրությունից, գտնվել են Նաիրի երկրում, Բիթ-Զամանի իշխանության

---

25 AKA, I, p. 136; ARI, II, § 242. Աշշուր-բել-կալայի արձանագրության այս հատվածները ենթադրաբար վերագրում էին Թիգլաթպալասար I-ին (И. М. Дьяконов. Предыстория армянского народа, с. 130, прим. 13)։ Այստեղ Շուբրևին վերաբերող հատվածը թարգմանվում է հետևյալ կերպ «во время похода на страну Ареме сразился в поселении Мурар /.../ страны Шубре». «Արեմե երկիր» ասելով նա հասկանում էր արամեացիների երկիր։ Սակայն հետագայում Ի. Մ. Դյակոնովը, բանավոր խոսակցության ժամանակ նշել է, որ տվյալ արձանագրության մեջ հիշատակված KUR a-ri-me նշանակում է «արամեացիներ», այսինքն այնպես ինչպես այսօր ընդունված է մասնագիտական գրականության մեջ. տե՛ս ARI, II, § 242.

26 AKA, I, p. 136; ARI, II, § 244. Մագրիսու (կամ Մագարիսու) քաղաքը գտնվել է Խաբուր և Ջակչակ գետերի խառնարանի մոտ. տե՛ս H. F. Russel. The Historical Geography of the Euphrates and Habur According to the Middle and Neo-Assyrian Sources.—Iraq, XLYII, 1958, p. 69; M. Liverani. The Growth of the Assyrian Empire in the Habur (Middle Euphrates Area; A New Paradigm).—State Archives of Assyria Bulletin, vol. 2, 1988, p. 94.

27 ARI, II, § 243.

28 ARI, II, § 245, 247. Այն մասին, որ Խանու լեռը գտնվել է Լուլլումու երկրում տե՛ս ARI, II, § 248։

29 R. F. Harper. Assyrian and Babylonian Letters. London and Chicago, 1892—1916, § 252; Ran Zadok. Notes on the Historical Geography of Mesopotamia and Northern Syria.—Abr-Nahrain, vol. XXYII, 1989, p. 166.

30 ARI, II, § 433—434.

31 D. D. Luckenbill. Ancient Records of Assyria and Babylonia. I, Chicago, 1926. § 771, 782, 783, 788.

32 Ի. Մ. Դյակոնովի կարծիքով Շուլմանուաշարեդուն Ասորեստանի Սալմանասար I թագավորն է (մ.թ.ա. 1263—1234 թթ.) (АВИИУ № 26, с. 294, прим. 45), իսկ Ա. Կ. Գրեյսոնը նրան ընդունում է որպես Սալմանասար II (մ.թ.ա. 1031—1020 թթ.) (ARI, II, § 641)։ Մենք բաժանում ենք Ի. Մ. Դյակոնովի կարծիքը, քանի որ Սալմանասար I-ը իսկապես արշավանքներ է ձեռնարկել դեպի Հայկական լեռնաշխարհ, իսկ Սալմանասար II-ի ժամանակ Ասորեստանը խիստ թուլացած էր։

33 AKA I, p. 239—240; АВИИУ, № 26, с. 293; ARI, II. № 641.

հարևանությամբ։ Սինաբուն նույնացվում է Տիգրիս գետի ձախ ափին գտնվող Սենեկայիս Ջենաբ քաղաքի հետ՝ 7 կմ Թուշխանից (ներկ. Քարխ) հյուսիս[34]։ Թիդու բերդաքաղաքը գտնվել է Սինաբուի հարևանությամբ և պետք է նշել, որ այն չի առնչվում միտաննական Տայգա մայրաքաղաքի հետ, որը տեղադրվում է Ջակջան գետի ափին գտնվող ներկ. Թել-Բրակ բնակավայրում[35], ուստի երկու բերդաքաղաքներն էլ գտնվել են Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան ծայրամասում։

Ելնելով Աշշուր-նածիր-ապալ II-ի վերոհիշյալ արձանագրությունից կարելի է հաստատել, որ դեռևս Սալմանասար I թագավորի (մ.թ.ա. 1263—1234 թթ.) իշխանության տարիներին նաիրյան Սինաբու և Թիդու բերդաքաղաքները նվաճվել են ասորեստանցիների կողմից և այնտեղ հաստատվել են ասսուրական կայազորները, իսկ ավելի ուշ արամեացիներին հաջողվել է ազատագրել այդ բերդաքաղաքները Ասորեստանի լծից և ապրել այնտեղ խաղաղ մինչև Աշշուր-նածիր-ապալ թագավորի գահակալությունը։

Հետազոտողների կարծիքով, հայ-արամեական վաղ հարաբերությունները և արամեերեն ու հայերեն լեզուների փոխազդեցությունը տեղի են ունեցել մ.թ.ա. VI—III դարերում, երբ բավականին մեծացել էր արամեերեն լեզվի դերը Պարսկական պետության մեջ[36]։ Այս վաղ ժամանակաշրջանում արամեերենի ազդեցությունը, ըստ Գ. Ջահուկյանի, կարող էր հանդես գալ, մի կողմից՝ պաշտոնական գրական լեզվի գործածության, մյուս կողմից՝ հարավի արամեախառն բնակչության հետ շփվելու ճանապարհով։ Սակայն Աշշուր-բել-կալայի, Աշշուր-նածիր-ապալ II-ի և Սարգոն II-ի վերոհիշյալ տարեգրությունների տվյալներից հետևում է, որ արամեացիները հիշատակվում են Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում՝ կոնկրետ՝ Տիգրիս գետի Վերին հոսանքից հյուսիս գտնվող Սինաբու (Ջենաբ) և Թիդու բերդաքաղաքներում, Բաթման գետի ավազանում, Շուբրե (Սասունի շրջան) երկրի Մուրարրիր քաղաքում, դեռևս մ.թ.ա. XI դարի առաջին կեսին։

Արամեացիների հետ ռազմական ընդհարումները նկարագրելիս, Աշշուր-բել-կալան հայտնում է միայն իր հաղթանակի մասին, չհիշատակելով գրաված քաղաքները և ռազմավարը, ինչը սովորաբար ասսուրական թագավորները հրապարտությամբ էին արձանագրում։ Ուստի դժվար է որոշել Աշշուր-բել-կալայի արամեացիների դեմ կատարած արշավանքների ճիշտ արդյունքը։

Բաբելոնում (=Կարդունիաշում) Մարդուկ-շապիկ-զերի թագավորի (մ.թ.ա. 1082—1070 թթ.) մահվանից հետո Աշշուր-բել կալան թագավոր է կարգում ոմն Ադադ-ապլա-իդդինային (մ.թ.ա. 1069—1048 թթ.)[37], որը, ըստ մեկ այլ արձանագրության, արամեացի Իտտի-Մարդուկ-Բալատուի որդին էր[38]։ Աշշուր-բել-կալան ամուսնանում է Բաբելոնի այս նոր թագավորի դստեր հետ և դրանով ամրապնդում իր ազդեցությունը Բաբելոնում։

Բաբելոնի գահին արամեացի Ադադ-ապլա-իդդինային նստեցնելը և նրա դստեր հետ ամուսնանալը Աշշուր-բել-կալայի նաև հատուկ մշակված քաղաքականությունն էր, որով հավանարար նա ձգտում էր բարիդրացիական հարաբերություններ պահպանել արամեացիների նկատմամբ և կանխել նրանց հետագա առաջխաղացումը։ Սակայն Ասորեստանի թագավորի ջանքերը, ինչպես

---

34 PAR, S. 28. Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 168

35 D. Oates. Excavations at Tell Brak, 1983—1984.—Iraq, 47 (1985). pp. 169—172; J. J. Illingworth. Inscriptions from Tell Brak, 1986.—Iraq, vol. 50, 1988, p. 107.

36 А. Г. Перханян. Два слоя арамейской лексики в древнеармянской лексике (доклад на II Всесоюзной сессии по изучению Древнего Востока 15 мая 1962 г.).— ВДИ, 1963, № 1, с. 169. Գ. Բ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 475—476։

37 ARI, II, § 285:

38 ARI, II, § 288:

հետևում է ապրյուրներից, ապարդյուն են անցնում։ Արամեացիները և սուբարիները՝ մասամբ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջանների զորամիավորումները ռազմական գործողություններ են ծավալում ոչ միայն Ասորեստանում, այլ նաև բաբելական քաղաքներում։ Բաբելական ծովամերձ երկրորդ դինաստիայի առաջին թագավոր Սիմբար-Շիխուն (մ.թ.ա. 1020—1006 թթ.) իր արձանագրությունում գրում է. «...Բաբելոնի թագավոր Ադադ-ապլա-իդդինայի իշխանության ժամանակ թշնամական արամեացիները և սուտիները Էքուռի[39] և Նիպպուրի հակառակորդները, Դուրանքի[40] ամայացողները, Սիրպար հին քաղաքը՝ աստվածների գերագույն դատավորի նստավայրը, նրանց պաշտամունքային առարկաները հափշտակողները։ Կողոպտեցին շումերների և աքքադցիների երկիրը. քանդեցին բոլոր տաճարները, ունեցածքը, գույքը Էնլիլի, որը արամեացիները տարան, իսկ սուբարիները վերցրին...»[41]։

Արամեացիների և սուբարիների տարած այս ռազմավարը, ինչպես այնուհետև գրում է Սիմբար-Շիխուն, ետ է վերցվում ասորեստանցիների կողմից և վերադարձվում է սկզբում Բալ-թիլ (պաշտամունքային կենտրոն Աշշուրում), իսկ հետո Դուրանքի (=Նիպպուր) քաղաք[42]։ Հիմք ընդունելով Սիմբար-Շիխուի արձանագրությունը կարելի է հաստատել, որ ռազմավարի վերադարձը կատարվել է Ադադ-ապլա-իդդինայի գահակալության սկզբից (մ.թ.ա. 1069 թ. մինչև մ.թ.ա. 1006 թ՝. Սիմբար-Շիխուի իշխանության վերջն ընկած ժամանակը։ Այս ժամանակահատվածում սուբարիների և արամեացիների դեմ արշավանքներ կազմակերպող Ասորեստանի թագավորներից մեզ հայտնի է միայն Աշշուր-բել-կալա թագավորը։ Ուստի հնարավոր է, որ այս դեպքերը կապ ունեն նույնիսկ վերը հիշատակված Աշշուր-բել-կալայի դեպի Շուբրե երկրի Մուրաբրիր քաղաք՝ արամեացիների դեմ ձեռնարկած արշավանքի հետ։

Արամեացիները և մյուս քաղաքական կազմավորումները նկատելի չափով ուժեղանում են Աշշուր-բել-կալայի իշխանությունից հետո։ Նրանց ճնշման ներքո Ասորեստանը խիստ թուլանում ու երկար ժամանակ դուրս է մնում քաղաքական ասպարեզից։ Այս ժամանակահատվածի իրադարձությունների մասին որոշ տեղեկություններ պահպանվել են Աշշուրդան II (մ.թ.ա. 934—922 թթ.) և Ադաղներարի II (մ.թ.ա. 911—891 թթ.) թագավորների տարեգրություններում։ Ըստ այս տարեգրությունների, արամեացիների կողմից նվաճվում են ասսուրական բերդերը և ավերածության են ենթարկում բուն Ասորեստանի քաղաքները[43], որոնցից մասնավորապես հիշատակվում է հյուսիսային շրջաններում գտնվող Ապկու քաղաքը[44]։ Ասորեստանի այս ճգնաժամին մեծապես նպաստեցին նաև Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջանների պետական կազմավորումները։ Շուբրե երկրի զորամիավորումները շարժվում են դեպի Մեծ Զաբ գետի վերին հոսանքի շրջան, որը գտնվում էր Ասորեստանի տիրապետության տակ։ Այստեղ նրանք պարտության են մատնում ասսուրական

---

39 Էքուռը Նիպպուր քաղաքի տաճարն է։

40 Դուրանքին Նիպպուր քաղաքի այլ անվանաձևն է։

41 A. Goetze. An Inscription of Simbar-Sihu.—Journal of Cuneiform Studies, XIX, 1965, № 4, p. 121—122, lines 10—14; M. Heltzer. The Suteans. Naples. 1981, p. 91.

42 Նույն տեղում, տեքստի 18—19-րդ տողերը։

43 ARI, II. § 363, 421—423.

44 ARI, II, § 423. Ապկուն համարվել է Ասորեստանի հին քաղաքներից մեկը. այն ավերվել է մինչև Ադադներարի II (մ.թ.ա. 911—891 թթ.) գահակալությունը (ARI, II, § 423), բայց Աշշուր-բել-կալայի իշխանությունից հետո՝ այսինքն Ասորեստանի վերոհիշյալ ճգնաժամի տարիներին, եթե հաշվի առնենք այն փաստը, թե Աշշուր-բել-կալան ավարտում է Ապկու քաղաքի թագավորական պալատի շինարարությունը, որը սկսել էր դեռևս Աշշուր-բեշ-իշի I-ը (մ.թ.ա. 1133—1116 թթ.) (ARI, II, § 252)։

կայազորներին և իրենց երկրի սահմանին են միացնում Արինու[45], Տուրխու, և Զադուրու քաղաքները։ «...Արինու, Տուրխու, Զադուրու գրաված քաղաքները, որը Շուբրե երկիրը Ասորեստանից խլել էր...»[46]։ Այս փաստը վկայում է, որ մ.թ.ա. XI դարի երկրորդ կեսից մինչև մ.թ.ա. X դարի վերջը՝ այսինքն Աշշուրբել-կալայի մահից մինչև Ադադներարի II-ի (մ.թ.ա. 911—891 թթ.) գահակալությունը, Շուբրե երկրի սահմանները Մուշի շրջանից ձգվել են մինչև Մեծ Զաբ գետի վերին հոսանքը, որտեղ, ինչպես ցույց են տալիս աղբյուրները, դեռևս մ.թ.ա. XII դարում ձևավորվել էին հզոր խուռի-ուրուատրիական (ուրարտական) պետական կազմավորումներ[47]։ Ուստի կարելի է պնդել, որ վերոհիշյալ ժամանակահատվածը հանդիսացել է պատմական կարևոր էտապ Շուբրե երկրի զարգացման ու պետական իշխանության ձևավորման համար։

ПРОДВИЖЕНИЕ АРАМЕЕВ В ЮГО-ЗАПАДНЫЕ РАЙОНЫ АРМЯНСКОГО НАГОРЬЯ И ИХ БОРЬБА ПРОТИВ АССИРИИ В XII—XI вв. до н. э.

Доктор истор. наук Г. М. АВЕТИСЯН

Резюме

В статье в свете новых данных обосновано ранее высказанное нами мнение о том, что арамейские племена распространились по юго-западным районам Армянского нагорья не в VI в. до н. э., как было принято считать в научной литературе, а раньше— в XI в. до н. э. Рассматриваются военно-политические взаимоотношения между арамеями и ассирийцами в период царствования Тиглатпаласара I и Ашшурбелкалы. Уделено внимание военным действиям страны Шубре в борьбе против Ассирии. Показано, что в этой борьбе шубрийцы освободили и присоединили к своей стране обширную территорию до верховьев Большого Заба, где уже были созданы сильные хурритоурартские государственные образования.

THE MOVEMENT OF ARAMAEANS TO THE SOUTH-WESTERN REGIONS OF ARMENIAN HIGHLAND AND THEIR STRUGGLE AGAINST ASSYRIA IN THE XII—XI cc. B. C.

Doctor of Hist. Sc. H. M. AVETISSIAN

Summary

Under the light of new data included in the chronical of Assyrian kings the earlier expressed opinion of the author which says that the Aramaean tribes spreaded in the South-western regions of Armenian Highland not in the YI c. B. C., as adopted by scholars, but in the XI c. B. C. finds new proof. The military-political relations belween Aramaeans and Assyrians during the reigns of Assyrian king Tiglath-Pileser I and Asurbel-kala is also discussed here. Special attention was given to the military operations of Subria in the struggle against Assyria. It is shown that in this struggle the Subrians had liberated and joined to their country a vast territory as far as the upper valley of the Upper Zab, where Hurro-Urartian state formations had already been founded.

---

45 Արինու քաղաքը գտնվել է Այսա լեռան ստորոտում, Մեծ Զաբ գետի վերին հոսանքի շրջանում. հանդիսացել է Մուսրու (Մուսասիր, Մուծաձիր) երկրի կենտրոնական քաղաքը և նույնացվում է ուրարտական աղբյուրների Արդինի (=Մուսասիր) քաղաքի հետ (АВИИУ, № 2, прим. 9; № 10, V, 73, с. 274.

46 ARI, II, § 422. Թուրխու և Զադուրու քաղաքները հավանաբար գտնվել են Արինու քաղաքի մոտակայքում։

47 И. М. Дьяконов. Предыстория армянского народа, с. 128.